ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ 2020թ.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ. **<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ**

ՀԱՍՑԵ. **ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նժդեհի 5**

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ **www.oks.am**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏ **oksshirak@gmail.com**

1.Կորպորատիվ կառուցվածքը

Համաձայն Ընկերության Կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով.

Ընկերությունը չունի Բաժնետերերի ընդհանուր ժողով, քանի որ ընկերությունը 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է, որի բաժնետոմսերն ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Շիրակի մարզպետին:

բ) Խորհուրդ.

Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել, քանի որ ընկերությունն ունի մեկ բաժնետեր:

Հիմք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 83 կետ 1. (բաժնետիրական ընկերություններում խորհուրդ ստեղծվում է 50 և ավելի բաժնետերերի դեպքում):

գ) Գործադիր մարմին

Ընկերությունը չունի գործադիր մարմին, Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը, որը նշանակվել է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից թափուր տեղի համար հայտարարված մրցույթի արդյունքում:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են.

Ընկերությունը ունի մեկ բաժնետեր ի դեմս Հայաստանի Հանրապետության, որը տիրապետում է 20 բաժնետոմսերի, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 14446100 դրամ, ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 288922000դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:

2. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հաշվետու տարում չեն գումարվել բաժնետերերի տարեկան ընդհանուր և արտահերթ ժողովներ, քանի որ ընկերությունը 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

3. ԽՈՐՀՈՒՐԴ

Ընկերությունը ունի մեկ բաժնետեր և ընկերությունում խորհուրդ չի ստեղծվել: Ընկերությունը 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է, որի բաժնետոմսերն ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

4. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Ընկերությունում չկան խորհուրդի հանձնաժողովներ, քանի որ խորհուրդ չի ձևավորվել:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը, որը նշանակվում է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից:

Գործադիր տնօրեն անուն ազգանուն՝ Ժորժիկ Սերոբյան

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ 19 հունվարի 1980թ.

Կրթություն՝ բարձրագույն մասնագիտական /Երևանի պետական բժշկական համալսարան/

Աշխատանքային փորձառություն՝ 15 տարի

Հիմնական որակավորում՝ Բիզնես վարչարարություն՝ բուժհաստատությունների կառավարում, մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա

Ընկերությունում աշխատած տարիներ՝ 15 տարի

Գործադիր տնօրենը չի հանդիսանում որևէ ընկերության խորհրդի հանձնաժողովի անդամ:

Ընկերության տնօրենի պարտականությունները՝

1. Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում ընկերության անունից.
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
3. Գործում է առանց լիազորագրի.
4. Տալիս է լիազորագրեր.
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ.
8. Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, վարչակազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը.
9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
11. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական

պատասխանատվության միջոցներ.

12. Իրավասու է իր հրամանով ստեղծել վարչական խորհուրդ .

6. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերությունում չի իրականացվել ներքին աուդիտ:

7. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերությունը կորպորատիվ քարտուղար չունի, քանի որ խորհուրդ ստեղծված չէ :

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերությունում չի իրականացվել արտաքին աուդիտ:

9. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան և շահութաբաժնի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզպետին, որպես 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն: 2020 թվականին ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի Հարկային տեսչություն, Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարության Պետական առողջապահական գործակալություն:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ի

գործադիր տնօրենի պաշտոնակատար՝ Սամվել Ավետիսյան